ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՄԱԶԱՍՊԻ ԾՊՆԵՑՅԱՆԻ «ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ Ը.00.02-«ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ» ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը ՀՀ գյուղատնտեսության տնտեսական զարգացումն ապահովող 2020-2030 թվականների ռազմավարության առաջնահերթություններից մեկն է: Մրցունակության բարձրացումը ենթադրում է արտադրողականության բարձրացում, որն էլ կհանգեցնի համախառն արտադրանքի ավելացմանը, նոր շուկաների ներգրավմանը, արտահանման ծավալների ավելացմանը:

Այսօր առավել քան կարևորվում է գյուղատնտեսության ոլորտում մրցունակության բարձրացումը, որն իր հերթին կնպաստի նոր շուկաների հայտնաբերմանը, շուկաների դիվերսիֆիկացմանը, որոնք նոր հնարավորություններ կարող են ստեղծել ՀՀ-ի համար: Այս առումով թեման խիստ արդիական է և բխում է վարվող քաղաքականությունից:

Աշխատանքը շարադրված է 188 էջի վրա, ունի տրամաբանական կառուցվածք: Ատենախոսության նպատակն է՝ ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը: Այդ նպատակի իրականացման համատեքստում ատենախոսը աշխատանքի 3 գլուխներում մանրամասն վերլուծել է մրցունակության պայմանավորող գործոնները, գնահատման չափանիշները, ցուցանիշները և մեթոդները, առաջադրել գյուղատնտեսության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշ և դրա հիման վրա գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության մակարդակը, հիմնավորել գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության իրականացման հնարավորությունները, վերլուծել ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշների փոփոխության միտումները, գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցությունը, գնահատել գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների քանակական ազդեցությունը, առաջադրել

ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները և գնահատել դրանց արդյունավետությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է՝ ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը:

Այդ նպատակի իրականացման համատեքստում ատենախոսության շրջանակներում նախանշվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ճյուղի մրցունակության էությունը, այն պայմանավորող գործոնները, գնահատման չափանիշները, ցուցանիշները և մեթոդները,
- առաջադրել գյուղատնտեսության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշ և դրա հիման վրա գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության մակարդակը,
- հիմնավորել գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության իրականացման հնարավորությունները,
- վերլուծել ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշների փոփոխության միտումները,
- ուսումնասիրել գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության միջազգային փորձը,
- գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցությունը,
- գնահատել գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների քանակական ազդեցությունը,
- առաջադրել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները և գնահատել դրանց արդյունավետությունը:

Ատենախոսության հիմնական կառուցվածքային մասերը բխում են առաջադրված խնդիրներից, դրանք հանդիսանում են միմյանց լրացնող հաջորդականություն կազմող բաղադրիչներ: Աշխատանքը գլխավորապես բաղկացած է երեք գլուխներից, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են.

Ատենախոսության առաջին՝ **«Գյուղատնտեսության մրցունակության տեսամեթոդաբանական հիմքերը»** գլխում մանրամասն վերլուծվել է մրցունակության էությունը, գնահատման չափանիշները, ցուցանիշները, մեթոդները: Հեղինակն առաջին գլխում կատարված ուսումնասիրություններից ելնելով, եկել է այն եզրահանգման, որ

գյուղատնտեսության մրցունակության վերաբերյալ ամբողջական պատկերացում կարելի է կազմել այն բնութագրող չափանիշների, ցուցանիշների և պայմանավորող գործոնների համալիր ներկայացման դեպքում:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ գյուղատնտեսության մրցունակության արդի վիճակը, դրա բարելավման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները»** գլխում ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշների փոփոխության միտումները, ուսումնասիրվել է գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության միջազգային փորձը, գնահատվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցությունը, առաջադրվել են այդ քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները:

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման և մրցունակության մակարդակների վրա նկատելի ազդեցություն է ունենում գների գործոնը: Այս առումով հեղինակի կողմից կատարվել է արտադրանքի միջին և ներմուծման գների համեմատություն, հաշվարկվել են գյուղատնտեսական մթերքների մրցունակության գործակիցները: Հաշվարկները կատարվել են՝ հաշվի առնելով նշված մթերքների ներմուծման պայմանները: Կատարված հաշվարկները վկայում են, որ բոլոր գյուղատնտեսական մթերքների մրցունակության մակարդակը դիտարկված ժամանակահատվածի առանձին տարիներին տատանվել է, և այս դեպքում նշված մակարդակի մասին ամփոփ պատկերացում կարելի է կազմել մրցունակության գործակցի միջին ցուցանիշից: Բուսաբուծական արտադրատեսակներից այդ ցուցանիշն ամենաբարձրը գրանցվել է ձմերուկի, իսկ ամենացածրը՝ գարու համար: Անասնապահական մթերքներից ամենաբարձր մրցունակությունը գնահատվել է կաթի, իսկ ամենացածրը՝ թռչնի մսի համար: Հեղինակի կողմից այս գլխում վերլուծվել է նաև արտահանման դինամիկան:

Հեղինակը, որպես մրցունակության բարձրացման կարևոր ուղի, դիտարկել է գյուղատնտեսական նշանակության հողերի, մասնավորապես վարելահողերի արդյունավետ օգտագործումը, վերլուծվել է օգտագործման վիճակը, չօգտագործման պատճառներն ու ներկայացվել է հիմնախնդրի լուծմանն ուղղված առաջարկություններ: Աշխատանքի այս գլխում ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը, ներկայացվել է թվային տեխնոլոգիաների դերը մրցունակության բարձրացման գործում:

Աշխատանքում առավել հատկանշական է 2.3 ենթակետը, որտեղ հեղինակը գնահատել է գյուղատնտեսության մրցունակության վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցությունը: Գնահատվել է պետական բյուջեից հատկացումների և գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի միջև կապի բնույթը: Կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ գյուղատնտեսության բյոջետային հատկացումների մեկ մլն դրամով ավելացման հետ զուգահեռ գյուղատնտեսության

համախառն արտադրանքի արժեքը ավելացել է 3.6 մլն դրամով: Միևնույն ժամանակ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բյուջետային հատկացումները նշանակալի ազդեցություն են թողել գյուղատնտեսության համախառն արտադրանքի վրա: Ըստ կառուցված մոդելի դիտարկվող ժամանակահատվածում գյուղատնտեսությանը բյուջետային հատկացումների մեկ մլն դրամով ավելացումը նպաստել է գյուղատնտեսության արտադրողականության 0.036 հազ. դրամով կամ 36 դրամով ավելացմանը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ բյուջետային հատկացումները դրական ազդեցություն են ունեցել ճյուղի մրցունակության բարձրացման վրա, սակայն ազդեցությունը թույլ է եղել:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման առաջարկվող քաղաքականության հիմնական ուղղությունները»** գլխում տրվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների ազդեցության քանակական գնահատականը, ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիր-ների լուծման ուղիները, ինչպես նաև գնահատվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունա-կության բարձրացման առաջարկվող քաղաքականության հիմնական ուղղությունների արդյունավետությունը:

Աշխատանքի արդյունքային դրույթներն ամփոփվել են եզրակացությունների մասում:

Հեղինակի կողմից կատարված տվյալ ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ արտահանման միտված քաղաքականություն ունեցող տնտեսության պայմաններում էապես կարևորվում է մրցունակ արտադրանք ունենալը, իսկ դրա համար անհրաժեշտ է խորը ուսումնասիրություններ ու վերլուծություններ՝ առանձին արտադրանքների մրցունակության վրա ազդող գործոնների առումով: Այս աշխատանքում բավականին հետաքրքիր և կարևոր նշանակություն ունեցող ուսումնասիրություններ և վերլուծություններ են կատարված, որը օգտակար է ոչ միայն հետազոտողների, այլև նաև քաղաքականություն մշակողի և մասնավորի համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ իրականացված վերլուծությունների և հետազոտությունների արդյունքներից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները.

1. Առաջադրված գյուղատնտեսության մրցունակության ինտեգրալային ցուցանիշի հիման վրա գնահատված ՀՀ գյուղատնտեսության ներքին մրցունակության մակարդակը:
2. ՀՀ գյուղատնտեսության մրցունակության մակարդակը բնութագրող առանձին արդյունքային հատկանիշների և ճյուղին բյուջետային հատկացումների միջև քանակական բացահայտված կապը:

3. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում բացահայտված ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող առանձին արդյունքային հատկանիշների վրա տարբեր գործոնների համատեղ ազդեցությունը (այդ թվում՝ դիտարկված գործոններից յուրաքանչյուրի ազդեցության չափը):

4. Առաջադրված ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղիները և գնահատված առանձին ուղիների արդյունավետությունը:

Ընդհանուր առմամբ, ատենախոսին հաջողվել է ներկայացնել ամփոփ գիտական աշխատանք: Միաժամանակ, աշխատանքի ուսումնասիրությունից բացահայտվել է որոշ բացթողումներ, որոնք հիմնականում հետևյալն են.

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության առաջին գլխի «Գյուղատնտեսության մրցունակության գնահատման չափանիշները, ցուցանիշները և մեթոդները» խորագրով 1.2 բաժնում որպես ճյուղի մրցունակությունը բնութագրող չափանիշ հեղինակի կողմից դիտարկվել է նաև նրա կայունությունը և ներկայացվել են այն բնութագրող ցուցանիշները: Վերջիններիս շարքը, մեր կարծիքով, առավել ամբողջական կլիներ, եթե դրանում ներառվեր նաև դիտարկվող ժամանակահատվածում տվյալ ճյուղում և տնտեսության այլ ճյուղերում ստեղծված համախառն ներքին արդյունքի փոփոխության տեմպերի հարաբերակցությունը:

2. Աշխատանքի երկրորդ գլխի «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցության գնահատումը և այդ քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները» անվանումը կրող 2.3 բաժնում հանգամանորեն ներկայացվել է գյուղատնտեսությանը բյուջետային հատկացումների ազդեցությունը մի շարք արդյունքային հատկանիշների՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի, արտադրանքի ծավալի ինդեքսի, արտադրողականության և ապրանքայնության մակարդակի վրա: Նշված ազդեցության վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու նկատառումներից ելնելով՝ ցանկալի կլիներ նաև գյուղատնտեսության պետական աջակցության առանձին ծրագրերին հատկացված միջոցների ազդեցության դիտարկումը թվարկված արդյունքային հատկանիշների վրա:

3. Ատենախոսության երրորդ գլխի «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղիները» խորագրով 3.2 բաժնում ներկայացված չօգտագործված գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը և դրանք շրջանառության մեջ ներառելուն ուղղված առաջարկություններից մեկը վերաբերում է վարելահողերի օգտագործման խթանման նպատակային պետական քաղաքականության իրականաց-

մանը, որը հնարավոր է համարվել պետական ծրագրերի միջոցով՝ կիրառելով ըստ գոտիների նպատակային սուբսիդավորման քաղաքականություն: Վերջինիս վերաբերյալ առաջարկությունները կիրառելիության առումով առավել արժեքավոր կարող էին լինել, եթե հնարավորինս հստակեցվեին ըստ գոտիների այդ քաղաքականության իրականացման առանձնահատկությունները:

4. Աշխատանքի երրորդ գլխի նույն 3.2 բաժնում առանձնակի տեղ է հատկացվել ՀՀ-ում թվային գյուղատնտեսության սարքավորումներ օգտագործող կառույցի դերին և նրա կազմակերպական կառուցվածքի սխեմայի առաջադրմանը: Վերջինս կիրառական առումով շահած կլիներ, եթե աշխատանքի տվյալ մասում առավել հստակեցվեին այդ կառույցի գործունեության մեջ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ հիշատակված բացթողումները և ցանկությունները էականորեն չեն անդրադառնում աշխատանքի վրա, և ատենախոսության ուսումնասիրությունից ընդհանուր եզրակացությունը հետևյալն է.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Համազասպի Ծպնեցյանի՝ հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման արդիական է ու հրատապ: Հեղինակը կարողացել է լուծել առաջադրված խնդիրները:

Աշխատանքում ուսումնասիրվել և ներկայացվել են գյուղատնտեսության մրցունակության վրա ազդող գործոնները, խորությամբ վերլուծվել է արտադրողականության վրա ազդող գործոնները ՀՀ-ում: Ատենախոսը հիմնավորված մեթոդական մոտեցումների կիրառմամբ կարողացել է լուծել առաջադրված խնդիրները:

Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից: Ատենախոսությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն, աշխատանքի արդյունքային դրույթները կարող են օգտագործվել հանրապետության պետական կառավարման իրավասու մարմինների, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության քաղաքականության մշակման, մասնավորապես գյուղատնտեսության արտադրանքների արժեշղթաների վերլուծության, արտադրողականության բարձրացմանն ուղղված առաջարկությունների մշակման գործընթացներում:

Լուսինե Համազասպի Ծպնեցյանի «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները» թեմայով ատենախոսությունն իր գիտական մակարդակով, հիմնավորվածությամբ, արդիականությամբ համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղի-

նակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02.- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչության պետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ի. Կ. Փանոսյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ի. Կ. Փանոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության
Գլխավոր քարտուղար՝ Հ.Ա.Նասիբյան

02.09.2024 թ.